ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4735-2021 գրությամբ «Ան-Մար Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի 22.03.2021թ. թիվ 01/61-6187 գրության հիման վրա 31.03.2021թ. թիվ 26/26-1/4735-2021 գրությամբ նախաձեռնել է «Ան-Մար Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ան-Մար Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ան-Մար Շին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.04.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՍՑ-ՆԳ-2021/84 ընթացակարգի հետ կապված հայտնում ենք, որ մենք ԵՔ-ԳՀԾՁԲ-21/92 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում հրաժարվել ենք չափաբաժիններից մեկից քանի որ մեզ սպասարկող բանկը տեխնիկապես չի հասցրել մեզ տրամադրել բանկային երաշխիք: Գիտակցում ենք, որ դա գնումների օրենսդրության խախտում է և պետք է ներառվենք մասնակցության իրավունք չունեցողների ցուցակում: Խնդրում եմ հաշվի առնել այն հանգամանքը, որ «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն նոր է սկսում գործունեությունը պետական մրցույթներում, սա մեր երկրորդ մրցույթն էր և հնարավորության դեպքում չներառել մեզ մասնակցության իրավունք չունեցողների ցուցակում»:

«Ան-Մար Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/84 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.03.2021թ. թիվ 01/61-6187 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/92» ծածկագրով Երևան քաղաքի թվով 11 վարչական շրջաններում հրատապ լուծում պահանջող ընթացիկ ծառայությունների գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակիցը 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ ներկայացնելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագրի օրինակները՝ հրաժարվելով սակայն ընթացակարգի 6-րդ չափաբաժնի (Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում հրատապ լուծում պահանջող ընթացիկ ծառայություններ) մասով պայմանագիր կնքելու առաջարկից (գրությունը կցվում է)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/84 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:
3. «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն, Երևանի քաղաքապետարանին ուղղված 18.03.2021թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է 6-րդ չափաբաժնից և խնդրում է իր հետ պայմանագիր կնքել միայն 4-րդ չափաբաժնի մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4735-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 22.03.2021թ. թիվ 01/61-6187 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Ան-Մար Շին» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

«Ան-Մար Շին» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանին ուղղված 18.03.2021թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է 6-րդ չափաբաժնից և խնդրում է իր հետ պայմանագիր կնքել միայն 4-րդ չափաբաժնի մասով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ան-Մար Շին» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 18.03.2021թ., Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է 6-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4735-2021 գրությամբ «Ան-Մար Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ան-Մար Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**